

Միավորված ազգերի Բնակչության հիմնադրամ (ՄԱԲՀ)

Պետրոս Ադամյանի 14 փ., Երևան-0010, Հայաստանի Հանրապետություն

Հեռ.՝ (37410) 566073, Ֆաքս՝ (37410) 543811

Կայք: www.unfpa.org

ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի տարածաշրջանային նոր նախաձեռնություն՝ ընդդեմ գենդերային բռնության Հարավային Կովկասում

ք.Երևան, 16/05/2008թ.

Այսօր ՄԱԿ-ի հայաստանյան գրասենյակում պաշտոնապես ներկայացվեց ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի «Ընդդեմ գենդերային բռնության Հարավային Կովկասում» երեք տարվա տարածաշրջանային ծրագիրը, որը ֆինանսավորվել է Նորվեգիայի կառավարության և ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի կողմից:

Ծրագրի նպատակն է ստեղծել Հայաստանում, Ադրբեջանում և Կրաստանում գենդերային բռնության նվազեցմանը նպաստող միջավայր և օժանդակել այս դաշտում միջազգային պարտականությունների իրականացմանը:

«Ընդդեմ գենդերային բռնության Հարավային Կովկասում» ծրագիրը (ԸԳԲ) գենդերային բռնության դեմ ուղղված առաջին տարածաշրջանային ծրագիրն է, որը կաշխատի ինչպես քաղաքականության մշակման, այնպես էլ համայնքային մակարդակում՝ ապահովելով քաղաքացիական հասարակության մասնակցությունը ծրագրերի իրականացման, վերահսկման և գնահատման ողջ ընթացքում: Միջազգային և տեղական կազմակերպությունների հետ համագործակցելով՝ ծրագիրը կլրացնի ժողովրդավարական կառավարման ՄԱԿ-ի Ջարգացման ծրագրի (ՄԱԾ) ռազմավարությանը և կհիմնվի այս դաշտում առկա փորձի վրա:

Ծրագիրը հատկապես կնպաստի գենդերային տեսանկյունից օրենսդրության կատարելագործմանը, հասարակության գենդերային բռնության մասին իրազեկության բարձրացմանը, տեղական և տարածաշրջանային մակարդակներում գենդերային հիմնախնդիրների ոլորտում գործիչների միջև համագործակցության ուժեղացմանը և տարածաշրջանում գենդերային բռնության խնդիրների արդյունավետ լուծման համար ազգային գենդերային համակարգի կարողությունների բարձրացմանը, ինչպես նաև այս դաշտում մասնագետների, այդ թվում ոստիկանության և դատախազության, սոցիալական և առողջապահության աշխատակիցների, վիճակագիրների և այլ ներգրավվածների գիտելիքների կատարելագործմանը:

Ողջ աշխարհում գենդերային բռնությունների խնդիրը ճանաչում է ձեռք բերում որպես մարդու իրավունքների ոտնահարման ամենաակնառու ձևերից մեկը, որն առկա է գրեթե բոլոր հասարակություններում անկախ գերիշխող քաղաքական համակարգից, տվյալ ազգի սոցիալական և տնտեսական պայմաններից, մշակութային նորմերից և սովորույթներից: Այն խորապես արմատավորված է և արտահայտվում է կանանց և տղամարդկանց իրավունքների և հնարավորությունների առկա անհավասարությամբ, որը սահմանափակում է նրանց մասնակցությունը սոցիալ-տնտեսական և քաղաքական գործընթացներին, ինչպես նաև խոչընդոտում է առաջխաղացումը և ներուժի արդյունավետ օգտագործումը:

Գենդերային բռնության կանխարգելման և գենդերային անհավասարության և անարդարության վերացման կարևորության հարցը արտացոլվել է մի շարք միջազգային փաստաթղթերում, հատկապես՝ ՄԱԿ-ի Կանանց նկատմամբ բռնության վերացման Հռչակագրում (1993), ՄԱԿ-ի Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիայում (1979), ներկայացել է, որպես խնդրո առարկա մի շարք այլ առանցքային փաստաթղթերում՝ ներառյալ Բնակչության և զարգացման միջազգային համաժողովի գործողությունների ծրագիրը (ICPD, 1994) և Պեկինյան գործողությունների ծրագիրը (1995), ինչպես նաև ընդգրկվել է «Հայաստանի Հանրապետությունում կանանց վիճակի բարելավման և հասարակության մեջ նրանց դերի բարձրացման 2004-2010 թթ.» ՀՀ Ազգային ծրագրում:

Միջոցառմանը, որին ներկա էին կանանց իրավունքներով և գենդերային հիմնահարցերով զբաղվող ՀՀ պետկառույցների, միջազգային դոնորական կազմակերպությունների, միջազգային և տեղական ՀԿ-ների ու ՋԼՄ ներկայացուցիչները, ելույթով հանդես եկան ՄԱԿ-ի մշտական համակարգող/ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի մշտական ներկայացուցիչ Տյն. Կոնսուելո Վիդալ Բոյուսը, ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի առաջին տեղակալ Պրն. Արայիկ Պետրոսյանը, ինչպես նաև ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամի ներկայացուցիչը:

ՄԱԲՀ-ն, ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամը, բնակչության և վերարտադրողական առողջության ծրագրերին աջակցություն ցուցաբերող աշխարհում ամենամեծ միջազգային ֆինանսավորման աղբյուրներից է: Միջազգային բեմում գենդերային բռնությունների խնդիրներով զբաղվող կազմակերպությունների շարքում ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամը ձեռք է բերել համաշխարհային ճանաչում իբրև մի գործակալություն, որը միշտ եղել է գենդերային հավասարության ջատագովների առաջին շարքերում՝ խթանելով իրավական և քաղաքականության բարեփոխումները և սեռազատված տվյալների հավաքագրումը, ինչպես նաև օժանդակելով կանանց առողջությունը բարելավող և կյանքում վերջիններիս ընտրությունն ընդլայնող ծրագրերին:

Լրացուցիչ տեղեկատվության համար դիմել ՄԱԲՀ «Ընդդեմ գենդերային բռնության Հարավային Կովկասում» ծրագրի հետևյալ հեռախոսահամարով (37410)51 20 38 կամ ուղարկել էլեկտրոնային հաղորդագրություն arakelyan@unfpa.org հասցեով: